

երկրորդը Լեհահայերուն (1 Սեպտեմբեր 1671), երրորդը՝ Wisniowiecki թագաւորին (10 Սեպտեմբեր 1671): Քամիենիեց հասնելով, Վարդանովիչ Եպիսկոպոս՝ տեղւոյն հայ երեսփոխաններուն ցոյց կու տայ կաթողիկոսին նամակները: Երեսփոխանները կը յայտարարեն՝ թէ ոեւէ որոշողութիւն չեն կրնար առնել Լէոպոլտոյ հայերէն առաջ: Վարդանովիչ Լէոպոլիս կ'երթայ, հայ երեսփոխաններուն կը ներկայացնէ Կաթողիկոսական գրութիւնները, պահանջելով որ ճանչցուի իբրեւ օգնական Եպիսկոպոս Թորոսովիչ Արքեպիսկոպոսին: Երեսփոխաներէն ոմանք համամիտ չեն գտնուիր Հայրապետական կարգադրութեան, սակայն ի յարգանս Կաթողիկոսին, կը խնդրեն Արհի. Քիերեմովիչէն որ իբրեւ Եպիսկոպոս պատուէ Վարդանովիչը, եւ անոր աստիճանին համեմատ զայն ընդունի Եկեղեցւոյ մէջ պատշաճ տեղ մը տալով իրեն, կղերէն առաջ: Քիերեմովիչ՝ որ կանխաւ խորհրդակցած էր Լէոպոլտոյ լատին օգնական Եպիսկոպոսին, Արհի. Giedzinskiի, եւ Թէադինեան ու Յիպուսեան կրօնաւորներու հետ, կը պատասխանէ՝ թէ այս մասին ոեւէ հրաման չունի Առաքելական Նուիրակէն, եւ կը յորդորէ որ Վարդանովիչ անձամբ ներկայանայ Արհի. Ռանուցցի Արքեպիսկոպոսին (22):

Վարդանովիչ Առաքելական Նուիրակին կը յանձնէ Յակոբ Զուղայեցիին նամակը,